

ՊԱՐՈՒՅՐ ՍԵՎԱԿ

(Ծննդյան 50-ամյակի սուրճիվ)

ՀՍՍՀ ԳԱ քղբակից-անդամ Ա. Տ. ՂԱՆԱԼԱՆՅԱՆ

Արդեն երկու տարուց ավելի է, ինչ մեզ հետ չէ Պարույր Սևակը, հայ գրականության փայլուն դեմքերից մեկը: Մեզ հետ է այժմ միայն նրա կերտած գրական հուշարձան-կոթողը, որը հավերժորեն անմոռաց պիտի պահի բանաստեղծի պայծառ հիշատակը:

Պարույր Սևակը (Պարույր Ռաֆայելի Ղաղարյանը) ծնվել է 1924 թ. Հայկական ՍՍՀ Արարատի շրջանի Սովետաշեն (Զանախչի) գյուղում, հողագործի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է տեղի դպրոցում: 1940 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, որն ավարտել է 1945 թ.: Համալսարանն ավարտելուց հետո ընդունվել է Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան, որտեղ ուսանելուն զուգընթաց աշխատել է «Ավանգարդ» թերթում, Արտասահմանի հետ մշակութային կապի հայկական ընկերությունում, «Գրական թերթում»: 1951 թ. ուսանել է Մոսկվայի Մ. Գորկու անվան գրականության ինստիտուտում, որի դասընթացն ավարտելուց հետո այդ նույն ինստիտուտում աշխատել է իբրև դասախոս:

1963 թ. մինչև իր կյանքի վերջը նա աշխատում էր ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: 1966—71 թթ. եղել է Հայաստանի դրողների միության քարտուղար:

Սովետական կառավարությունը բարձր է գնահատել Պարույր Սևակի սրբական, հասարակական գործունեությունը, նրան պարգևատրելով շքանշանով և մեդալներով:

Մեծարժեք ու լայնահուն է Պարույր Սևակի գրական ժառանգությունը: Նա ռահվիրա դարձավ մեր օրերի երիտասարդ բանաստեղծներից շատերի համար՝ փառաբանելով միշտ լույսն ու լուսավորը.

«... Լույս, լո՛ւյս գվարթ,
Անձրևի պես,
Տեղա այնպե՛ս,
Որ աշխարհում
Լոկ մի՛-միակ սովեր մնա,
Այն էլ միայն երկնի վրա՝
Լոկ անձրևի՛ սովերը կտր՝
Ծիածա՛նը...»:

Գրականության մեջ իսկական նորարար լինելով՝ Պարույր Սևակը իր կապերը երբևէ չխզեց անցյալի բանաստեղծության և ժողովրդական բանահյուսության հետ: Նա յուրովի վերարծարծեց ու զարգացրեց այդ բանաստեղծության ու բանահյուսության մնալուն ու կենսունակ տարրերը: Բր բացառիկ ընդունակությունների շնորհիվ հիանալի յուրացնելով ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային բանավեստի լավագույն ավանդները, նա ինքնատիպ ու նոր որակ հաղորդեց այդ ավանդներին:

Պարույր Սևակի բանաստեղծություններում գաղափարական և գեղարվեստական կերպավորում գտան հայ ժողովրդի նվիրական հույզերն ու մտորումները, նրա մոռալ անցյալը, լուսավոր ներկան:

«...Այս լեռնակղզում լեռֆաբերն են շատ,
Թե՞ կերպածեւած շիրմաֆաբեր:
Եվ ծառերն են շատ այս լեռնակղզում,
Թե՞ վեր ծառացած սուրբ խաչֆաբեր:
Եվ ավելի շատ անտա՞ն է հատվել,
Թե՞ անսուրբ ձեռնով խաչֆաբ է շարղվել
Դաբեր այծեծ այս լեռնակղզում...»

Սակայն ես այսօր և ամենայն օր
Մշտական վշտով նրանց եմ ողբում,
Ովքեր շունեցան շիրմաֆաբ-շիրիմ,
Ինչպես շունեցան պատանֆ-պատարագ:

... Մե՛կ չէին նրանֆ
և ոչ էլ երկու:
նրանֆ բյո՛ւրֆ-բյուրո՛ց,
նրանֆ՝ ա՛զգֆ-ազի՛նֆ...»:

Նման ողբանվագ տողերի հետ բանաստեղծը զվարթ շեշտերով գովերգել է իր վերածնված և օր-օրի բարգավաճող հայրենիքը.

«...Երեկ դեռ ուր ու սովագար՝
Մենֆ շողացիւնֆ անբավ գանձով.
Ծովից գրկվա՛ծ, մի ազգ անձո՛վ—
Եվ տվեցիւնֆ մենֆ... ծովակալ...»

Մենֆ՝ մատնված շարդ ու գաղթի,
Անբախտներից անբախտ՝ կյանֆում,
Բազմաստեղյան հոծ երկնֆում
Մենֆ՝ գուրկ անգամ աստղից բախտի—
Հիմա փրկված շար ու անգուրթ
Սամում-խորշակ-ուրագանից,
Ողջ աշխարհին երեկ անհաւտ
Մեր երկնասեր Բյուրականից
Ոչ թե անհայտ կամ դեռ հեռու

Աստղի ծինն եմ փաղարարում,
Այլ և գտնում հազարաբյուր
Աստեղաբո՞ւյլ—
Աստղասրվյո՞ւտ...»:

Պարույր Սևակը, սակայն, չի սահմանափակվել միայն հայ ժողովրդի անցյալ ու ներկա կյանքի բանաստեղծական պատկերումով: Նրան խորապես հուզել է և միջուկային գեների դարաշրջանում ապրող մարդկանց ճակատագիրն ընդհանրապես: Գիմելով համայն աշխարհի հաշվիչ մեքենաներին և ճշգրիտ սարքերին, նա անհանգստության ու վրդովմունքի իր ձայնն է բարձրացրել պատերազմի հրձիգների դեմ, տազնապի ազդանշան հնչեցնելով մարզկուլթյանը սպաննացող վաղվա ահեղ վտանգի դեմ.

«Հաշվո՞ւմ եմ, հաշվո՞ւմ...
Հաշվեցե՛ք հապա,
...Գեթ այն մոտալուտ-մոտավոր տարին,
Երբ ուր, վերջապես, ազգերը խոցված
Պիտի ողջանան կամ ապափնվեն,
Եվ վիրավորող ազգերն ստանան
Հատուցումն արդար ու շքեկանվող:
...
Հաշվեցե՛ք նաև, մի վերջի՛ն անգամ,
Թե այդ ի՞նչ ձևով,
Ի՞նչ մեքենայի օգնությամբ բարի
Գեո կարելի է մաքրուն մա՛րդ պահել
Եվ կամ նո՛ւր միայն մաքրուն դարձնել մաքր...»:

Ազգային, հասարակական, բարոյական կարևոր հարցերի հետ, Պարույր Սևակը բազմիցս անդրադարձել է նաև սիրո հարցին: Վերջինիս պատկերումը իրավացիորեն համարելով «ամեն գրականության փորձաքարը», նա իր սիրային բանաստեղծություններով ցույց տվեց, որ ինքը միանգամայն ի դուրս է նորովի արձագանքելու հայ և ալլազգի հին ու նոր լավագույն սիրերգականերին:

Բանաստեղծի սիրո մասին գրած գործերից, իբրև ցայտուն օրինակ, հիշենք հատկապես նրա վերջին ժողովածուի մեջ տեղ գտած «Սերը» խորագրով ստեղծագործությունը, ուր սիրո պատկերումը հասցված է գեղարվեստական խտացման ու ընդհանրացման բարձրակետի.

«... Երկու աչքեր, անվե՛րջ, հետապնդում են քեզ,
Երկու աչքեր, ասես մի զույգ դրոշմ.
Իրենց անջնջելի տիպն են դնում
Կլանի՛ր, խմած ջրի՛ր, ողջ աշխարհի՛
Եվ մինչև իսկ արյան գեղիկներե՛րի վրա,—
Երկու աչքեր՝
Գրո՞շմ,
Կնի՛ք,
Խառա՛ն...
— Սերն է...»:

Սևակի բանաստեղծական խոսքի ներգործուն ուժի զաղտնիքը հեղինակի բացառիկ դիտողականության, կյանքի լավ ճանաչողության, նրա բացասական երևույթների անխնա քննադատության, բանաստեղծի խոհականության, հախուռն հույզի, հեռագնա ընդհանրացումների, անսքող ճշմարտացիության ներդաշն համաձուլվածքի մեջ է: Այդ խոսքը աչքի է ընկնում նաև արտահայտչական միջոցների արտակարգ բազմազանությամբ և ինքնատիպությամբ: Սևակի համար բնորոշ են՝ ստեղծագործական երևակայության փայլատակումները, պատկերավոր զուգանմանությունների գյուտերը, ժամանակակից հայերենի, հնօրյա գրաբարի և ժողովրդական բարբառների հարստությունների անկաշկանդ օգտագործումը:

Տաղանդաշատ բանաստեղծ լինելով, Պարույր Սևակը օժտված էր նաև բանասերի, գրականագետի, քննադատի և հրապարակախոսի անուրանալի շնորհներով: Նրա գրչին են պատկանում լեզվի, պատմության, գրականության, արվեստի, դպրոցի, մշակութային և հասարակական բազում կարևոր հարցերի ու հեղինակների նվիրված խելացի, ինքնատիպ, համարձակ, ազնիվ կրթով տոգորված հոդվածներ, բանավեճեր, գրախոսություններ, որոնք կարող են կազմել մի ամբողջ ծավալուն հատոր: Ահա դրանցից մի քանիսը. «Ազգային սնապարծություն և ազգային հպարտություն», «Անաղարտ պահենք մեր մայրենի լեզուն», «Ասպետական անկրկնելին» (Սիամանթոյի մասին), «Բանաստեղծության և բանաստեղծական կոչման մասին», «Գրիգոր Նարեկացի», «Թումանյանի հետ», «Հայ նոր քնարերգության հիմնադիրն ու առաջին դասականը» (Մ. Պեշիկիսյանի մասին), «Հայ քնարերգության վահագնը» (Պ. Գուրյանի մասին), «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», «Հանձարեղ սիրերգներ» («հայրենների» մասին), «Հանուն և ընդդեմ ռեալիզմի նախահիմքերի», «Չարենցը և արդիականությունը», «Սերունդների հերթափոխությունը», «Տերյանը պահանջում է» և այլն:

Սևակի տպված ու անտիպ բանասիրական և գրականագիտական գործերի շարքում առանձնակի տեղ պետք է հատկացվի նրա «Սայաթ-նովա» ծավալուն մենագրությանը (Երևան, 1969 թ.), որի համար Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան դրականության ինստիտուտի գիտական խորհուրդը հեղինակին միանգամից շնորհեց բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան: Սեվակի հիշյալ գիրքը նոր և ինքնատիպ խոսք է մեր հանճարեղ գուսանի գրական մեծարժեք ժառանգության հետազոտության բնագավառում: Այստեղ հաջողությամբ բացահայտված է Սայաթ-նովայի ստեղծագործության ողջ հարստությունը, ժամանակի հետ նրա ունեցած սոցիալական, կենցաղային, հոգեկան կապերն ու հակամարտությունները, սիրո դրաման, արծարծված ու լուծված են բանասիրական մի շարք վիճելի հարցեր, քննադատված-հերքված են ոմանց կողմից առաջ քաշված զանազան սուտ ու սխալ վարկածներ:

Իր ողնածուծով և ավիշով գիր ու գրականության մարդ լինելով, Պարույր Սևակը միաժամանակ իսկական քաղաքացի էր և մեծ հայրենասեր այս բառերի ամենալայն ու խորը առումներով: Իր կյանքի ողջ իմաստը նա տեսնում էր հարադատ հայրենիքին ազնվորեն ծառայելու սուրբ գործի մեջ:

«...Ա՛խ, իմ հայրենի՛f...
 Դու՛
 Հագարամյա իմ ազգանո՛ւնր.
 Ես —
 Այնպես ապրել կարողանայի,
 Որ ինձ ազգանուն բաշխելուդ համար
 Դու երբևիցե անհարմար չզգաս...
 Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է:
 Ա՛խ, երանի թե այնպես մեռնեմ,
 Որ ուու... ինձ սգաս...»:

Չնայած իր համեմատաբար կարճատև կյանքին, Սևակը պարտք չմնաց հայրենիքին: Ես բազմադարյան հայ հարուստ գրականությունը էլ ավելի հարստացրեց «Անլուելի զանգակատուն», «Ծղիցի լույս», «Ծռածայն պատարագ», «Եվ այր մի՛ Մաշտոց անուն», «Ծրգ երգոց», «Հայաստան», «Մայրենի լեզու», «Մոր ձեռքերը», «Վարք մեծաց» և նման հոյակապ ստեղծագործություններով:

Բանաստեղծի շուրջ տաղանդը դեռ շատ հեռու էր սպառվելուց: Զիրականացված մնացին նրա ծրագրած «Սասունցի Դավիթ» էպոսի գրական նոր մշակումը, Գրիգոր Նարեկացու «Ողբերգության մատյանի» աշխարհաբար գիտական թարգմանությունը, որոնց նա նախապատրաստվում էր ձեռնամուխ լինելու: Եվ էլի ինչքան գլուխգործոցներ կծնվեին... Եթե անագորույն մահը անժամանակ չկասեցներ բանաստեղծի արգասավոր կյանքի ընթացքը: